

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԵՎ ՌՈՒՍ
ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1894—1896 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Օսմանյան կայսրության բռնապետ սուլթան Աբդուլ Համիդ II, ինչպես հայտնի է, 1894—1896 թթ. կազմակերպեց արևմտահայության համընդհանուր ջարդեր՝ ցեղասպանություն: Թուրք փառիշահի այս անօրինակ ոճրագործությունն առաջ բերեց բողոքի ու ազնիվ զայրույթի լայն շարժում շատ երկրների առաջավոր մտավորականության մեջ: Ներկա հոդվածում փորձենք ցույց տալ ռուս գիտնականների, գրողների ու հասարակական-քաղաքական մտքի նշանավոր ներկայացուցիչների դիրքորոշումը մեր ժողովրդի այդ տարիների ողբերգության նկատմամբ:

1

Հակասօսմանյան, հակասուլթանական բողոքն ու զայրույթը Ռուսաստանում արտահայտվեց առաջին հերթին գրավոր խոսքի միջոցով: Հրապարակվեցին բազմաթիվ մեծ ու փոքր աշխատություններ, հոդվածներ ինչպես Մոսկվայում, Ս. Պետերբուրգում, այնպես էլ այլ քաղաքներում: Հիշատակենք դրանցից առավել կարևորները:

1896 թ., Մոսկվայում, ռուս մտավորականների ջանքերով լույս տեսավ արևմտահայության կոտորածներին նվիրված հոդվածների ու այլևայլ նյութերի արժեքավոր մի ժողովածու, որն ուներ հետևյալ վերնագիրը. «Положеніе армян в Турции до вмешательства держав в 1895 году», Москва, 1896.

Գրքի կազմողների խնդիրն է եղել հավաստի տեղեկություններ հաղորդել արևմտահայերի մասսայական կոտորածների մասին, բացատրել դրանց պատճառները և հրապարակայնորեն դատապարտել արյունարբու սուլթանին ու նրա շուրջը համախմբված ջարդարարներին:

Ժողովածուի առաջաբանը գրել է անվանի իրավաբան, պրոֆեսոր, Մոսկվայի համալսարանի միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ, կոմս Լ. Ա. Կամարովսկին: Ընդգծելով արևմտահայերի աղետալի վիճակը նա նշել է, որ սուլթանական ռեժիմը հենվում է բռնի ուժի, հալածանքների, վայրենի կամայականությունների ու բացարձակ ստախոսության վրա: Առաջաբանում ասված է, որ Բարձրագույն Դուռը երբեք չի կատարել Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով նախատեսված բարեփոխումներն Արևմտյան Հայաստանում, քանի որ մեծ տերությունները անհրաժեշտ ճնշում չեն գործադրում Թուրքիայի վրա: Կամարովսկին այնուհետև նշում է այն փաստը, որ մի շարք վարձված հակահայ գրչակներ աշխատում են ստեղծել այն տպավորությունը, թե կոտորածների պատճառը իբր հենց իրենք՝ հայերն են, որոնք հաճախ հրաժարվում են հարկեր վճարել, դիմում են զինված դիմադրության և այլն: Անվանի իրավագետը հեղինակներով ու արհամարհանքով է խոսում զազրելի ստախոսների մասին և ընդգծում, որ հայերի, ինչպես նաև հույների ու այլ քրիստոնյա ժողովուրդների ազատագրական պայքարի դրդապատճառը Օսմանյան կայսրությունում տիրող բռնապետական ծանր լուծն է:

Եվրոպական մեծ տերությունները, դրոմ է կամարովակին, շօգնեցին հայերին, այդ պետք է անի մեր հայրենիքը՝ Ռուսաստանը:

«Наше отечество всегда оказывало покровительство угнетенным христианам на Востоке. Владея главным религиозным центром армян и соприкасаясь своими землями с турецкой частью Армении, оно сплоти вещей не может оставаться равнодушным зрителем совершающихся там событий».

Այս է ուս ազանավոր մտավորականի հիմնական եզրակացությունը:

Հրապարակված ժողովածուում մեծ տեղ են պրավում միջազգային համաբավ ունեցող հեղինակների՝ Մ. Գ. Ռուսեն-ժեկմենի, Մակկոլի, էմ. Դիլլոնի, Ֆր. Գրինի այն աշխատությունները, որոնցում բերված են հարուստ, անվիճելի վկայություններ հայկական կոտորածների մասին (նկատենք, որ այդ աշխատությունների ուսերեն թարգմանությունը կատարված է բարձր որակով): Սակայն բելգիացի իրավագետ Ռուսեն-ժեկմենը «Հայաստանը, նայե՛ր և միջազգային պայմանագրե՛ք» իր արժեքավոր ուսումնասիրության մեջ կանգ է առնում նաև Հայկական Հարցի վրա: Անաշտոթեն մեկնությամբ ներվ կատարված իրադարձությունները, հեղինակը իրավամբ նշում է այն հանգամանքը, որ արևմտահայերի ճակատագրում խիստ բացասական ու վնասակար դեր խաղաց անգլիական կառավարությունը, որը, ելնելով իր հակառուսական քաղաքականությունից, ամեն կերպ պաշտպան կանգնեց սուլթանական պետությանը:

Այդ նույն միտքն է զարգացնում նաև անգլիացի հեղինակ Մ. Մակկոլը «Անգլիայի պատասխանատվությունը Հայաստանի նկատմամբ» իր հոդվածում: Միաժամանակ այդտեղ բերվում են բազմաթիվ փաստեր այն մասին, թե ինչպիսի ծանր, ողբերգական վիճակ են ապրում հայերը թուրքական լծի տակ: Պատասխանելով այն հարցին, թե ովքեր են պատասխանատու հայկական կոտորածների համար հեղինակը գրում է, որ ամեն ինչ կատարվում է սուլթան Աբդուլ Համիդի հրամաններով: Դեռևս 1890 թ., գրում է Մակկոլը, սուլթանը ծրագիր մշակեց քրիստոնյա բնակչությանը մասսայական կոտորածների ենթարկելու վերաբերյալ:

Մակկոլը ևս ժխտում է այն հերյուրանքը, ըստ որի կոտորածների պատճառը իբր հայերի ապստամբություններն են: Հայերի ապստամբություն կոչվածը միայն առասպել է, գրել է նա:

Հատուկ ուշադրության արժանի է անգլիացի հեղինակի այն եզրակացությունը, որ օսմանյան բռնապետության գլխավոր պաշտպանը անգլիական կառավարությունն է: Եթե վերջինս ցանկանար, ապա սուլթան Աբդուլ Համիդը ստիպված կլիներ իրագործել խոստացված ռեֆորմները Արևմտյան Հայաստանում:

Սասունի հայ բնակչության 1894 թ. կոտորածների մասին հավաստի ու շատ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում իդլանդացի նշանավոր արևելագետ էմիլ Դիլլոնը: 1895 թ. նա անցավ Թուրքիա՝ նպատակ ունենալով անձամբ ստուգելու ու պարզելու հայերի կոտորածների մասին տարածված լուրերը: Նկատենք, որ կատարված իրողությունը թաքցնելու գիտավորությամբ թուրքական իշխանություններն աշխատում էին օտարազգիներին թույլ չտալ այցելել Սասուն: Բայց Դիլլոնը, անտեսելով այդ և լավ հասկանալով, որ իր կյանքը ենթարկում է մեծ վտանգի, ալեումենայիվ եկավ Արևմտյան Հայաստան, այցելեց Սասունի շատ գյուղեր ու ավաններ և նույն թվականի օգոստոսին «Contemporary Review» պարբերականում հրապարակեց ճշգրիտ փաստեր ու նյութեր հայերի ողբերգության վերաբերյալ:

Նոսելով այն մասին, թե ինչպիսի ծանր վիճակ են ապրում արևմտահայերը Սասունի կոտորածներից մեկ տարի անց՝ 1895 թ., Դիլլոնը գրել է, որ արևմտահայության վիճակն ավելի է վատացել, կատարվում են ավելի ծանր ոճրագործություններ, որոնց համար Անգլիան բարոյական պատասխանատվություն է կրում: Դատապարտելով անգլիական կառավարության թուրքո-

Ֆիլոսոֆությունը, նա չի մոռացել նշել, որ ի տարբերություն Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանը հայերի նկատմամբ վարել է բարեկամական ու հովանավորող քաղաքականություն:

Ինչպես տեսնում ենք էմ. Դիլլոնը հանդես եկավ որպես ազնիվ մարդասեր, իսկական քաղաքացի ու սկզբունքային գիտնական: Ի դեպ, նկատենք, որ էմիլ Դիլլոնը բացի անգլերենից տիրապետում էր ռուսերենին, ֆրանսերենին, գերմաներենին և հայերենին՝ գրաբարին: Չորս տարի արևելագիտություն է դասավանդել Խարկովի համալսարանում, անգլերեն է թարգմանել Եղիշեի Վարդանանց պատերազմին նվիրված գիրքը և այլն:

Ժողովածուում զետեղված է նաև ամերիկյան միսիոներ Ֆ. Դ. Գրինի «Հայկական նգնաժամը և բուրժուազիայի տիրապետությունը» աշխատությունը, որը նույնպես հիմնականում նվիրված է Սասունի 1894 թ. կոտորածներին: Հեղինակը աշխատել է Կ. Պոլսում, Վանում և Արևմտյան Հայաստանի մի շարք կենտրոններում, անձամբ լսել է Սասունից փախած հայերի ցուցմունքներն ու պատմածները: 1894 թ. սեպտեմբերին, գրել է նա, տեղի ունեցավ «гигантское и по своему ужасу не поддающееся описанию избиение армян—мужчин, женщин и детей»:

Ֆ. Գրինը նույնպես ժխտում է այն կարծիքը, որ իբր կոտորածների պատճառն իրենք հայերն էին: Ամերիկյան միսիոները գրել է, որ հայերը, չունենալով այլ ելք, ստիպված էին դիմել զենքի և զոհվել արժանավայել ձեռնվճար հանդուգն խիզախությամբ:

Ժողովածուի սկզբում, Կամարովսկու առաջաբանից հետո, զետեղված է անգլիացի լիբերալների առաջնորդ Գլադստոնի հայտնի ճառը արտասանված 1895 թ. հուլիսի 26-ին: Ինչպես իր նախորդ ելույթներում, այնպես էլ այստեղ անգլիացի հանրահայտ պետական գործիչը ջերմ խոսքեր է ասել հայերի հասցեին և խստորեն դատապարտել «Կարմիր սուլթան» Աբդուլ Համիդի վայրագությունները:

Հետաքրքիր հարցեր է շոշափում նաև Գր. Ա. Դիեվը (Գ.Ա. Ջանշյան) իր «Հայկական Հարցը Թուրքիայում» հոդվածում: Նա նախ մերժում է թուրքական պաշտոնական տեսակետները արտահայտող հեղինակների կարծիքները և միաժամանակ վճռականորեն հանդես գալիս նաև հայատյաց ռուս մի շարք ռեակցիոն պարբերականների, մասնավորապես «Гражданин» ու «Московские Ведомости» թերթերի դեմ: «Можно и должно разоблачать козни Англии, но позволительно ли, например, как это делает «гражданин», поднимать на смех освободительную миссию России на Востоке?»

Ռուսաստանը անցյալում ազատագրել է բալկանյան ժողովուրդներին օսմանյան ծանր լծից, գրում է Դիեվը, նա այսօր պետք է օգնի նաև հայ բաղձաշարշար ժողովրդին:

2

1897 թ. դարձյալ Մոսկվայում լույս տեսավ հոդվածների մի նոր ժողովածու, որն ուներ «Братская помощь пострадавшим в Турции армянам» խորագիրը (այն որոշ լրացումներով վերահրատարակվեց մեկ տարի հետո): Հարուստ, բազմաբովանդակ այդ հատորի խմբագիրն էր հայ անվանի հասարակական գործիչ, վերը հիշված Գրիգոր Ավետուկի Ջանշիկը (Ջանշյան), որին գործակցել ու զգալի շափով օգնել է ռուս գիտնականների, գրողների ու հրապարակախոսների մի ամբողջ խումբ՝ Դ. Անուշին, Կ. Բալմոնտ, Յու. Վեսելովսկի, Վ. Գոլմստերմ, Մ. Կավալեսկի, Ն. Մորոզով, Մ. Նիկոլսկի, Ա. Սազոնով, Վ. Սոլովյով և ուրիշներ: Այսպիսով, նշված աշխատությունը հրապարակվեց ռուս անվանի մտավորականների միացյալ ջանքերով: Ի դեպ, այդ փաստը ընդգծել է հենց ինքը Ջանշիկը, գրքի առաջաբանի հետևյալ տողերում. «Совокупный труд русских ученых и литерато-

«Все лучшие представители народа, все духовные руководители, учителя, общественные деятели, купцы были заранее намечены властями в качестве жертв и погибли от руки убийц. Дома были разорены, семьи разрушены, кормильцы семей зарезаны» (*см.* J. Rendel and Helen Harris. *Letters from the Scenes of the Recent Massacres in Armenia*, London, 1897).

[illegible]

Խոսելով թուրքական իշխանությունների բազմաթիվ դազանությունների ու արևմտահայերի աղետալի վիճակի մասին Վ. Գուլմստերմը կոչ էր անում ռուս հասարակայնությանը նյութական օժանդակություն ցույց տալ տասնյակ մազարավոր հայ որբ երեխաներին և կոտորածներից փրկված, բայց սովի հատուկված արևմտահայերին (Գուլմստերմի այս հոդվածը ժողովածուում արտատպված է «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» թերթից)։

Ժողովածուի երկրորդ մասում բերված են հարուստ նյութեր ինչպես հայկական ու ռուսական, այնպես էլ ֆրանսիական ու գերմանական աղբյուրներից։ Հիշենք դրանցից միայն երկուսը։ Գերմանացի նշանավոր միսիոներ Յոհաննես Լեխսիուսի 1896 թ. Բեռլինում հրատարակված «Armenien und Europa» աշխատությունը, որը պարունակում է շատ կարևոր տվյալ-

յալներ հայաբնակ վիլայեթներում տեղի ունեցած ջարդերի մասին: Խարբերդում կատարված անցքերի մասին, օրինակ, այնտեղ ասված է.

«В Харберде 10-го и 11-го ноября турки без всякого вызова со стороны мирного армянского населения напали на армянский квартал и перебили жителей. Из донесения послов видно, что офицеры и солдаты принимали участие не только в грабеже, но и в убийствах, для чего пускали в ход ружейные и пушечные выстрелы... Более 60 деревень в окрестностях Харберда были опустошены, убитых бесчисленное множество...»

1897 թ. Փարիզում հրապարակվեցին ֆրանսիական կառավարության պաշտոնական վավերագրերը, որոնցում բերված են շատ կարևոր տվյալներ ինչպես Սասունի, այնպես էլ 1895—1896 թթ. համընդհանուր հայկական կոտորածների վերաբերյալ: Անգամ Ֆրանսիայի արտաքին գործոց մինիստր Գ. Անտոն, որ հայտնի թուրքոֆիլ էր, Տրապիզոնում, 1895 թ. հոկտեմբերին տեղի ունեցած անցքերի մասին ստիպված էր գրել հետևյալը.

«Теперь вполне доказано, что мусульмане, без всякого сигнала, дружно и одновременно бросились на армян... На всех улицах и площадях избивались встречавшиеся армяне, причем их добивали с неслыханною жестокостью. Торговцев вытаскивали из их магазинов и отдавали в руки убийц».

Մինիստրը այնուհետև ավելացնում էր, որ ջարդերին գործուն մասնակցություն են ունենում ու ղեկավարում թուրքական իշխանության ներկայացուցիչները:

Հետաքրքիր է, որ ժողովածուն կազմողները, ընդգծելով արևմտահայերի խիստ ողբերգական վիճակը, միաժամանակ հանդես էին բերում մխիթարող լավատեսություն, հայտնելով այն համոզմունքը, որ հայ ժողովրդին սպասում է լավ ապագա: Այսպես, օրինակ, գրքում տպագրած իր բանաստեղծության մեջ Նվզենի Մորոզովը գրում էր.

Привет тебе, народ многострадальный!
Ты вернись в будущность свою не устась,
Под игом вековым на родине печальной
Судьбу жестокою ты с твердостью несешь.
.....
Но верь, крепишься и жди — желанною зарей
Освобождение блеснет и над тобой.
.....
Грядущий век несет конец твоим слезам.

Ուշագրավության արժանի է նաև հետևյալ հանգամանքը: Հայերի կոտորածներին նվիրված այս մեծածավալ հատորին մասնակցել է հայտնի գիտնական Կ. Տիմիրյազևը՝ բնագիտության հարցերին վերաբերող իր մի հոդվածով: Իսկ աշխարհահռչակ Լեվ Նիկոլայևիչ Տոլստոյը Գ. Զանշիևին ուղղված իր նամակում ջերմորեն ողջունեց ժողովածուի հրատարակությունը:

* * *

«Ներքայրական օգնություն...» ժողովածուի խմբագրությունը բացի իր հիմնական խնդրից՝ բողոքել հայկական կոտորածների դեմ, հետապնդել է նաև մի այլ նպատակ. ստեղծել հարուստ և հետաքրքիր բովանդակություն ունեցող մի այնպիսի գիրք, որը լայն տարածում ստանա և նրա վաճառքից գոյացած գումարը տրամադրել որք երեխաներին ու մյուս հայ սովյալներին: Այդ խնդիրը ևս լուծվել է հաջողությամբ: Աշխատության մեջ տպագրվել են կարևոր ու ընդհանուր հետաքրքրություն առաջացնող պատմագիտական, բա-

նասիրական և այլ բնույթի բազմաթիվ հոդվածներ ու նյութեր: Այնտեղ, օրինակ, հրապարակվել են նոր նյութեր Վ. Բելինսկու, Ա. Հերցենի, հայ նշանավոր հայագետներ Մ. Էմինի, Ք. Պատկանյանի, Լազարյանների ու Դելյանովների տոհմերի, ներսես Աշտարակեցու, Խրիմյան Հարիկի, նշանավոր ռազմական գործիչներ Մ. Լորիս-Մելիքովի, գեներալներ Ի. Լազարևի, Ա. Տեր-Ղուկասովի և այլոց մասին: Տպագրվել են գիտական լուրջ հոդվածներ հայ ժողովրդի պատմության և մշակույթի, Արևելյան Հարցի, Հայկական Հարցի վերաբերյալ, թարգմանություններ Ալիշանից, Բաֆֆուց, Ավ. Ահարոնյանից, հետաքրքիր հաղորդումներ նշանավոր եվրոպացի հայասերների, մասնավորապես մեծ մարդասեր Ջեյմս Բրայսի մասին, որի հայտնի «Transcaucasia and Ararat» աշխատության շորորորդ, լրացված հրատարակությունը լույս տեսավ 1896 թ.: Պատահական չէ, որ ժողովածուն բարձր գնահատական ստացավ իր ժամանակի ինչպես հայ, այնպես էլ ռուսական մամուլում*:

Բնորոշ է, որ ինչպես հայտնում է ժողովածուի խմբագրությունը, 1898 թ. հուլիսին արդեն գրքի վաճառքից զոյացած զուամար կազմում էր մոտ 30000 ռուբլի (ոսկով), որից շուրջ 16 հազար փոխանցվել է Կ. Պոլսի ռուսական դեսպան Ա. Նելիդովին: Վերջինս դրանից 15640 ֆրանկ տրամադրել է Կ. Պոլսի հայոց պատրիարքին, որի խնամքին էին հանձնված մոտ 30000 որբեր: Նելիդովը հարկ համարեց հրապարակորեն շնորհակալություն հայտնել ռուս հասարակությանը և մամուլին այն սրտացավ ուշադրության ու եղբայրական օգնության համար, որ ցուցաբերվեց արևմտահայության նկատմամբ:

Գրքի ծախսերը հայերի հետ միասին հոգացել են նաև ռուսներ: Նվիրատուների ցուցակում հիշված են, օրինակ, Ա. Մատուրով, Վ. Վանանով, Ի. Պրոտեզ, Ա. Մանթաշեյ, Տ. Թումանյան, Յու. Բազանով, Ա. Բարրի, Լ. Պոլյակով, Պ. Բոտկին, Գ. Վոդաու, Ի. Սերջև, Ա. Մորոզով, Ն. Նալդենով, Ե. Ստարիցկի, Վ. Սպասովիչ, Կ. Սոլդատենկով և ուրիշներ: Նկատենք նաև, որ ժողովածուի հրատարակության գործին զգալի շափով օգնել են «Արաքս», «Исторический Вестник», «Нива» և մի շարք այլ պարբերականներ:

3

Վերը նշված երկու ժողովածուներից բացի լույս տեսան նաև առանձին հեղինակների աշխատություններ, ինչպես օրինակ. *Лазарев Я. Причины бедствий армян в Турции и ответственность за разорение Сасуна. Тифлис, 1896; Ахов М. Россия и армяне. СПб., 1896; Жигарев С. Русская политика в Восточном вопросе. М., 1896; Камаровский Л. Восточный вопрос. М., 1896; Тенишев В. Позор цивилизации, по поводу турецких дел. СПб., 1897.*

1897 թ. Ս. Պետերբուրգում առանձին գրքով հրատարակվեց Մ. Մակկոլի հայտնի գրքի ռուսերեն թարգմանությունը: Այս և նման մի շարք աշխատություններում բացահայտվել են սուլթան Աբդուլ Համիդի ոճրագործությունները արևմտահայերի նկատմամբ: Միաժամանակ նրանցում ընդգծվել է այն ճշմարտությունը, որ մեծ տերությունները գործնական քայլեր չեն կատարում վերջ զննելու թուրքական իշխանությունների բարբարոսություններին:

* Նշանավոր «Вестник Европы», պարբերականը, օրինակ, գրել է. «Независимо от своей благотворительной цели, заслуживающей всякого сочувствия, роскошно напечатанный литературно-научный сборник «Братская помощь», почти в тысячу страниц, с массою иллюстраций, портретов и автографов, должен обратить на себя общее внимание читающей публики по богатству и разнообразию своего содержания... Заключительная часть книги содержит в себе потрясающий обзор турецких зверств и насилий над армянами за последние три года». *Ժողովածուում գետնգլած են նաև Հ. Ավագովսկու շորս նկարները նվիրված հայերի կոտորածներին:*

Հայկական կոտորածների կապակցությամբ օսմանյան պետության ջարդարարական քաղաքականության դեմ շնչին բացառությամբ հանդես եկավ նաև ռուսական պարբերական մամուլը: Ի պաշտպանություն արևմտահայերի հողվածներ տպագրվեցին մասնավորապես «Петербургские Ведомости», «Русская мысль», «Новое слово», «Русский Вестник», «Вестник Европы», «Исторический Вестник», «Кавказ», «Мир Божий», «Биржевые ведомости» և այլ հանդեսներում ու թերթերում: Դրանցում հրապարակած իրենց հողվածներում ևս ռուս մտավորականությունը իր բողոքն էր արտահայտում հայ ժողովրդի դահիճների դեմ: Բնորոշ է, որ ժամանակի հայ մամուլը («Մշակը» «Հնչակը» և այլն) նշեց այն հանգամանքը, որ ռուս շատ մտավորականներ ազնվորեն հանդես են գալիս հայ ժողովրդի պաշտպանի դերում:

Ողբերգական վիճակում գտնվող արևմտահայությանը զգալի օգնություն ցույց տվեցին նաև Ռուսաստանի պաշտոնական շրջանները՝ ցարական կառավարության ինչպես բարձրագույն, այնպես էլ ստորին օղակները: Հայտնի է, որ 1897 թ. դեկտեմբերի 11-ին նիկոլայ II կայսրը ստորագրեց հրամանագիր, ըստ որի ամբողջ երկրում անցկացվեց հանգանակություն հալոթականներին, մասնավորապես Կարսի մարզում, Երևանի նահանգում և Հյուսիսային Կովկասում ապաստան գտած արևմտահայերին նյութական ու բարոյական օգնություն կազմակերպելու համար: Այդ հրամանագիրը լայն արձագանք գտավ ոչ միայն Մոսկվայում ու Ս. Պետերբուրգում, կենտրոնական նահանգներում, Կովկասում, այլև Արխանգելսկում, Սիբիրում, Հեռավոր Արևելքում և կայսրության շատ ծայրամասերում: Ստեղծվեցին բարեգործական միություններ, ընկերություններ ու գանազան, հանձնաժողովներ, հիմնվեցին որբանոցներ և այլն: Այս խնդրի վերաբերյալ հարուստ փաստաթղթեր ու տեղեկություններ են բերված Պ. Ս. Սիմոնյանի «Ռուսաստանի օգնությունը արևմտահայ գաղթականներին 1895—1900 թթ.» վերնագիրը կրող արժեքավոր հողվածում (տե՛ս ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի «Լրաբեր հաս. գիտ.», 1995 թ., № 1):

Հարկ է նշել, որ այս բարեկամական տրադիցիան շարունակվեց նաև Մեծ Եղեռնի տարիներին: Հայտնի է, որ 1915—1916 թթ. նույնպես ռուս մտավորականությունը և ընդհանրապես ռուս հասարակության լայն շրջանները ձեռնարկեցին միջոցառումներ մեծ աղետի մատնված հայ ժողովրդին օգնելու համար: Բաժակա՛ն է թեկուզ հիշատակել այն ելույթները, որ Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին ունեցան Մարսիմ Գորկին, Վայնրի՛ Բյուսովը, Յուրի Վեսելովսկին, Վ.Գորդլևսկին, Ս. Գորոդեցկին, Ա. Կուլեբակինը և ուրիշներ: Հիշենք նաև այն օգնությունը, որ ռուս շարքային զինվորները ու կոզակները հայ կամավորների հետ միասին ցույց տվեցին ոչնչացման վտանգի մատնված արևմտահայ որբ երեխաների, ծերունիների ու կանանց կյանքը փրկելու համար:

4

Անհրաժեշտ է նկատել, որ մեզ այստեղ հետաքրքրող հարցի վերաբերյալ ուղյուծյուն ունեցող պատմագրության մեջ առկա են սխալ կարծիքներ ու միտումնավոր եզրակացություններ: Արևմտյան պատմաբանների մոտ իշխող տեսակետը, օրինակ, այն է, որ իբր ինչպես ցարական կառավարությունը, այնպես էլ ռուս մտավորականությունը, մեղմ ասած, անտարբեր են եղել արևմտահայերի ողբերգության նկատմամբ: Զարմանալի է, որ այդ նույն անհիմն կոռուքիքը արտահայտել է նաև ռուս մտավորական Ա. Վ. Ամֆիտեատրովը (1862—1938), որը բացահայտորեն անտեսելով փաստերը, 1906 թ. Ս. Պետերբուրգում տպագրած իր «Հայկական Հարցը» գրքով կոմ գրեց միանգամայն զրպարտիչ տողեր անգամ Լ. Ն. Տոլստոյի մասին: Իրականությունը, սակայն, ինչպես մենք արդեն տեսանք, այն էր, որ ռուս հան-

ճարեղ զորղը ջերմությամբ ողջունեց «Եղբայրական օգնություն...» ժողովածուի հրատարակությունը:

Մի շարք հայ հեղինակներ, գտնվելով անգլիական ոռոսաֆոր պրոպագանդայի ազդեցության տակ և ըստ երևույթին անտեղյակ պատմական փաստերին, այն տեսակետն են հայտնել, թե հայկական կոտորածների գործում նավաստաշափ հանցավոր են սուլթանական Թուրքիան և ցարական Ռուսաստանը: Սխալ, արտառոց եզրակացություն... Ցարական լառավարությունը, իհարկե, եղել է հետամնաց բռնապետություն և որպես այդպիսին ճնշել, հարստահարել է ինչպես ոռոս ժողովրդին, այնպես էլ այլ ազգությունների: Իրադրոժելով դադութային, մեծապետական ծրագրեր, նա վարում էր ազգային ճնշման քաղաքականություն: Հանրահայտ է, որ փակվեցին հայկական դպրոցների ու բարեգործական ընկերությունների մեծ մասը, 1903 թ. բռնագրավեցին հայ եկեղեցու կալվածքները, պայքար ծավալվեց հայ ազգային-ազատագրական շարժման դեմ, հայտնի է, որ Մեծ Բրիտանիայի ագրեսիան դեպի Մերձավոր Արևելք խափանելու նպատակով ոռոսական պետությունը 1890-ական թթ. մերձեցավ Թուրքիայի հետ և հակառակ իր դարավոր քաղաքականությունը, ժամանակավորապես պաշտպանեց նրա ամբողջականությունը: Գիտենք, որ ոռոս բարձրաստիճան շինովնիկների շարքերում եղել են Լոբանով-Ռոստոփսկու ու Գուլիցինի նման հայատյաց, սև հարյուրակային զազրելի անձինք և այլն: Այդ բոլորը, սակայն, այնուամենայնիվ հիմք չեն տալիս նույնացնել ցարական կառավարության և արյունարբու սուլթան Համիդի բարբարոսական քաղաքականությունը: Պատմական փաստերը չեն հաստատում այդ անհիմն ու անարդարացի կարծիքը: Ռուսական պետությունը, ելնելով իր արտաքին քաղաքականության շահերից, երբեք չի ձգտել ոչնչացնել Արևմտյան Հայաստանի հայ բնակչությանը: Միանգամայն իրավացի էր նշանավոր հայրենասեր Արշակ Չոպանյանը, երբ հակառակ հայ թուրքոֆիլների քարոզներին, բազմիցս ընդգծել է այն հանգամանքը, որ ընդհանուր շահերի առկայության հետևանքով հայերի պաշտպանը և դաշնակիցը եղել է Ռուսաստանը: Մի՞թե սլատահական էր, որ ոռոս-թուրքական պատերազմների ժամանակ հայերը օգնել են ոռոսական զորքերին: Ո՞ւմ հայտնի չէ, որ արևմտահայ զանգվածները միշտ էլ ունեցել են ոռոսական օրինետացիա և այլն, և այլն (այս հարցերի մասին մանրամասնորեն խոսել ենք «Հայ-ռուսական հարաբերությունների պատմության մի քանի հարցերի շուրջը» մեր հոդվածում, տե՛ս ՊԲՀ, 1994, № 1—2):

Ի վերջո, կարծում եմ, չպետք է մոռանալ նաև այն իրողությունը, որ մեզանում ոռոսատյաց զաղափարներ են քարոզել գերազանցապես հայ հասարակական մտքի հետագեմ հոսանքի ներկայացուցիչները: Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում այդպիսիք էին, օրինակ, Կ. Պոլսի հայ պատրիարք տիտահոջակ Աշրղյանը, ոռոսահայ պահպանողական Սպանդար Սպանդարյանը և ուրիշներ, որոնք լինելով թուրքոֆիլներ ու անգլոֆիլներ հանդես էին գալիս Ռուսաստանի դեմ: Սակայն իրադարձությունները շուտով ցույց տվեցին, որ ճիշտ էին ոչ թե նշված ոռոսոֆորները (ռուսատյացները), այլ խաչատուր Աբովյանը, Ներսես Աշտարակեցին, Ստեփանոս Նազարյանը, Գրիգոր Արծրունին, Բաֆֆին, Կոմիտասը, Հովհաննես Թումանյանը և նրանց համախոհների փայլուն սերունդը:

ГЕНОЦИД ЗАПАДНЫХ АРМЯН И РУССКАЯ ИНТЕЛЛИГЕНЦИЯ В 1894—1896 ГОДАХ

Академик НАН РА М. Г. НЕРСИСЯՆ

Резюме

Геноцид западных армян, организованный в 1894—1896 годах кровавым султаном Абдул Гамидом, вызвал широкую волну протеста и справедливого гнева передовой интеллигенции многих стран. Свой голос протеста против злодеяний османского государства подняли также русские ученые, писатели, представители общественно-политической мысли. Были изданы книги, брошюры, сборники статей, опубликовано множество материалов в периодической печати и т. д. Ряд русских авторов выступавших с реакционными позиций, были подвергнуты критике. Большой отклик нашел, в частности, весьма ценный сборник статей *«Братская помощь пострадавшим в Турции армянам»*, изданный дважды — в 1897 и 1898 годах. Были организованы благотворительные общества, открыты сиротские приюты. Определенные шаги были предприняты и официальными кругами России. 11 декабря 1897 г. император Николай II подписал указ, согласно которому по всей стране был проведен сбор средств для оказания материальной и моральной помощи западным армянам, бежавшим от резни в Россию и нашедшим там убежище и приют. Таким образом, мнение, будто бы Россия в те годы оставалась безучастной к трагедии западных армян, не соответствует действительности.

THE GENOCIDE OF THE WESTERN ARMENIANS AND RUSSIAN INTELLIGENTSIA IN 1894—1896

Academician of the NAS of the RA M. G. NERSISSIAN

S u m m a r y

The Genocide of the Western Armenians organized by the bloody sultan Abdul Hamid in 1894—1896 brought a wide protest and just anger of the multi-national progressive intelligentsia. Russian scholars, writers, representatives of social-political thought also raised their voice of protest against the atrocities perpetrated by the Ottoman government. Books, brochures and collections of articles were published. The Russian press had also extensively treated the Armenian massacres' issue. Several Russian authors, expressing reactionary ideas, were severely criticized. A valuable collection of articles, entitled *„A Fraternal Aid to the Armenians Victimized in Turkey“*, received a particularly warm wide response. It was published twice in 1897 and 1898. Charity societies were organized and orphanages were opened. Certain steps were undertaken by the Russian officials as well. According to the special decree, signed by the Emperor Nikolai II on December 11, 1897, a fund-raising campaign was organized throughout Russia to support materially as well as morally those Western Armenians who had fled to Russia to escape the massacres. Thus, the opinion about Russia's unresponsiveness to the Western Armenian tragedy does not correspond to the historical reality.